

«Հաստատում եմ»

Երևանի շախմատի ֆեդերացիայի
փոխնախագահ՝ *Մ. Բալանթարյան* Ս. Բալանթարյան

04.03.2021թ.



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի 2021թ.-ի շախմատի պատանիների և աղջիկների առաջնություն

Ժամկետները՝ 20-29 մարտի 2021թ., խաղերի սկիզբը՝ 15:00-ին:

Ժամակարգը՝ 90-ական թույլ մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

Անցկացման վայրը՝ Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց /հասցե՝ ք. Երևան
Խանջյան 50/:

Առաջնությունն անցկացվելու է 6 առանձին խմբերով:

Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ մարզական կարգի մեկ բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 6-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 8 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև կիսաեզրափակիչ մրցաշարից իրավունք ստացած 25 շախմատիստներ:

1-ից 7-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն 1-ին մարզական կարգ և 1-ին կարգի բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2008թ. դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև կիսաեզրափակիչ մրցաշարից իրավունք ստացած 20 շախմատիստները:

1-ից 6-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն 1-ին մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2006թ. դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև 2007թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված 1-ին կարգի 1 բալ ունեցող շախմատիստները:

1-ից 4-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան աղջիկների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն ցանկացած մարզական կարգ ունեցող այն շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև 2012թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված 4-րդ կարգի 1 բալ ունեցող շախմատիստուհիները: 1-8-րդ հորիզոնականները զբաղեցրած մասնակիցներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան աղջիկների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն ցանկացած մարզական կարգ ունեցող այն շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2008թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 7-րդ հորիզոնականները զբաղեցրած մասնակիցներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2021թ. մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարին: